


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՐԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ի Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ ՕՐԵՔԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տեղի. ողջ դի. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տարեկան ծրանք 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբապու.
թեան վրայ է :

Խմբապուրթեան ուղղուած նա.
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ՕՐԻՆԱԿ ՄԸ

Ալեգարդ Տաթթոր Մերվիլէնի մահուան
լուրը հասաւ Պոլիսէն, ուր արժանաւայել
յուզարկաւորութիւն կատարուել է հայ բժշ-
կական մարմնոյն նահապետին :

Իր կենսագրութիւնը չէ որ պիտի ընենք
այստեղ, արդէն իսկ հրատարակուած ըլլա-
լով այն՝ առանձին տետրակով, ու այս ան-
գամ ալ, իր մահուան առթիւ, ամփոփուած
Պոլսոյ ազգ. թերթերուն մէջ :

Տաթթ. Մերվիլէնի մահուամբ կանհետա-
նայ ազգային հինաւորաց գործիչի դէմք մը և
Սահմանադրութեան հիմնադիրներէն ու խրմ-
բագիրներէն մէկը :

Իր ութսուն տարիներու բեռան տակ
կըսած ու ընտանեկան սուգերէ ընկճուած, երբ
գործով քայլերով կանցնէր պատուական ծե-
րունին, ամեն հայ բնազդաբար յարգանքի
զգացում մը կունենար անոր ճամբուն վրայ.
տարիքը, բժշկական տաղանդը, ընկերական
գիրքը, ծերակուտականի աստիճանը, հարըս-
տութիւնը չէին որ կը ներշնչէին այդ յար-
գանքն ի տես իր անձին ինչպէս ի լուր իր ան-
ուան, այլ այդ ամենէն գերազանցապէս բար-
ձր արժանիք մը, — պարկեշտութիւնը եւ
ուղղամտութիւնը զոր գիտցած էր միշտ պա-
հել ազգային գործերու մէջ՝ պետական ծա-
ռայութեան մէջ գտնուելով հանդերձ :

Եւ ճիշդ իր այդ յատկութեան, — որ
մեր մէջ հազուադէպ կը դառնայ դժբաղ-
դաբար — յարգանք ընծայելու համար՝ հե-
ռուէն այս տողերը կը նուիրենք ողբացեալ
Տաթթ. Մերվիլէնի յիշատակին :

Շատ տարիէ հետէ հրաժարած էր ո՛րեւէ
իրական մասնակցութիւն ունենալէ ազգային
գործերու մէջ, բայց իր փորձ խորհուրդներն
ու ձեռնհաս կարծիքը կուտար մտերմական
չըջանականերու մէջ :

Իր ուսանողական շրջանէն, զոր Լուի Թի-
լիբի օրով կատարեց Բարիզի բժշկական հա-
մալսարանը, ծանօթացած ըլլալով Թուրքիոյ
պետական երեք նշանաւոր անձերու՝ Բէշիտ,
Փուատ և Ալի փաշաներուն, այն ատեն տա-
կաւին երիտասարդ, այդ յարաբերութիւնը
մշակեց մինչեւ այն թուականներն ուր իր նախ-
կին ընկերները հասան Սատրազմութեան
պաշտօնին. բայց Տաթթ. Մերվիլէն այս յարա-
բերութիւններէ ոչ այնքան նպաստաւորուեցաւ

իր յառաջագիմութեան համար իբրեւ պետա-
կան մարդ, — չուզելով ընդունիլ ո՛րեւէ գոր-
ծօն պաշտօն ու բժիշկ միայն մնալով — այլ
գիտցաւ նպաստաւորուել անոնցմէ՝ ազգային
չըջանակի մէջ իր սիրելիական աշխատութիւնը,
Սահմանադրութիւնը գլխաւորաբար, ի կատար
ածելու համար օգտակարագոյն եղանակաւ :

Տաթթ. Մերվիլէն կը պատկանէր իրեն
ժամանակակից այն բարեյիշատակ ազգային-
ներու «գարդին» — Օտեան, Աղաթօն և Գեռ-
ուրիչ ոչ նուազ ծանօթ ու յարգելի անձնա-
ւորութիւններ — որոնք կառավարական ամե-
նաբարձր աստիճաններու և պաշտօններու հա-
սած, հաւասարապէս յարգելի էին Տէրու-
թեան և սիրելի՝ Ազգին : Գիտնական, գրա-
գէտ, ժողովական, գործիչ — այս բառին եր-
բեմնի անոյ իմաստով որ, աւա՛ղ, խորթա-
ցաւ ու աղաւաղուեցաւ ժամանակին հետ —
բայց միշտ պարկեշտ և խղճամիտ, ազգային
չահերը անձնական նկատումներէ վեր պահել
գիտնալով :

Այն օրը ուր Տաթթ. Մերվիլէն տեսաւ թէ
երկրին քաղաքական դրութիւնը և պարագա-
ներու փոփոխումը չպիտի ներէին իրեն՝ իր
ըմբռնումին ու զգացումին համաձայն շարու-
նակել մնալ ազգային գործունէութեան մէջ,
քաջուեցաւ ասպարէզէն՝ փոխանակ պետա-
կան չըջանակի մէջ յառաջագիմութեան առիթ-
ներ փնտռելու :

Ահա՛ գեղեցկագոյն օրինակը զոր կը
գտնենք ողբացեալ բժշկին բեղմնաւոր կեան-
քին մէջ, — առանց ծանրանալու իր ուրիշ ոչ
նուազ գնահատելի յատկութիւններուն վրայ՝
իբրեւ ինքնօգնութեան տիպար, տոկուն աշ-
խատող, խոհական անձ, գրասէր բժիշկ և
բարի հայ :

ՆԱՄԱԿ ՍՈՒՏԱՆԷՆ

(Շար. Նախորդ թիւէն եւ վերջ)

ՏՕՆԿՕԼԱ, 12 հոկտ.

Փութկոտութեամբ առաջ կը քշուի այս գծի
չինութիւնը. 2000ի մօտ անձեր բրտնաթոր կաշխատին
արեւին տակ : Աշխատաւորներու մէջ մեծ մաս մը
կը կոչուեն Տէրվիչ բանտարկեալներ, գոհ և ուրախ
են այս «անմեղ գտնուկները», մինչդեռ իրենց
ընտանիքները, աղտոտ ու պղծադի արարածներ,
ո՛ր գիտէ ո՛ր թափառաշրջիկ եղան : Անոնց կիներու
տեսքը շատ անգամ միտքս ձգած է Հայաստանի
գեղջուհի այրիները ու արտասուած եմ. ինչ մեծ
տարբերութիւն սակայն ձիւնի պէս ձերմակ կիներու

և այս սեւերես սաղաթներու մէջ, որոնց երեւոյ-
թը միայն նողկանք կազդէ մարդու :

Տասնեակնեք օր վերջ երկաթուղին Ապու Հա-
մատ հասած կըլլայ և այն ատեն շատ հաւանօրէն
անպաշտօններուն ալ երկաթուղով երթեւեկելու
թողարտուի : Միակ արգելքի մը համար, Աստուած
իմ, ինչքան նեղութիւններ չկրեցին անրազգաւոր
անպաշտօնները (civilians) : Տեսնելու էր հարիւ-
րաւոր վաճառականներ Գահլիքի մէջ միմեկ ընտա-
նեկան փափկասուն կեանքին վարժուած՝ որ ստիպ-
ուեցան օրերով անապատին մէջ ճանապարհորդել
ուղտով, յամրաքայլ և քրտնխաշ, հրեկէզ արեգական
ներքեւ, շատ անգամ, ո՛հ, շատ անգամ, առանց
կաթիլ մը ջուր գտնելու իրենց ծարուսապապակ լե-
զուն թրջելու համար : Գեռ կը յիշեմ՝ Բօշտ, ուր
բնակարանիս մէջ կը հիւրընկալէի հայրենակիցները,
բարեկամներ առանց որոյ իրենք ալ թերեւս ուրիշ
չատերու պէս, հարկադրուէին՝ ձմեռուան ատեն Նե-
ղա՛ւ գլրը գիշերել՝ բայցօրէն երկինքն անքաղ, խո-
նաւ օդին տակ, սաստկաշունչ փոթորիկն հանդէպ,
ենթակայ ըլլալով դողի, «տիտէի և տիտանիդէի»,
տեղային գլխաւոր հիւանդութիւնները, անխուսա-
փելի նորեկ անգոյշներուն համար :

Ապրիլ 15 էր, կարաւան մը կը հասնէր Քէրմա.
Արարկիրցի հայ վաճառականներ էին. ողջագուրեցի
զանոնք ինչպէս գրկախառն կընդգրկէ մայր մը իր
սիրասուն թոռնիկը : Հայրենասիրութիւն սովորու-
համար դուք ալ ինձ պէս անապատին մէջ գտնուե-
լու էիք, ո՛վ անտարբերներ : Մացառու թուփերու
վրայէն սաւաններ քաշած, յոգնած և արեգակնա-
խաշ կը հանգչէին հովանոյն ներքեւ. ճակատներէն
բրտնաբեր առուակի պէս կը հոսէր՝ մինչդեռ բերան-
նին հազար անէծքներ կը կարդային Սուտանին ալ
իրենց երազած շահերուն ալ : Անիծեցի՛ն արդեօք
Սուտանը իրենց շահաւէտ օրերուն մէջ, յիշեցի՛ն
թէ՛ «առանց բրտանց րազմայ շահ ոչ գոյ», Գրծ-
բաղդաբար այս տարի անգլիացի զօրքեր չեկան
այս կողմ. եթէ այդ ալ ըլլա՛ր՝ Գիտյողները միայն
գիտեն թէ ինչպէս շուայթրէն գրամ կը ծախսեն
այս արծաթատեսայ պլիւս-ճաֆէրները, խարթում
առնուելէ շատ առաջ, սակայն, անգլիացի վաշտեր
ալ սիտի գան, և կը կասկածի՞ք որ եկող տարի այս
օր խտիվական դրօշը չպիտի ծածանի մահտիւ.
Թեան մայրաքաղաքին վրայ՝ ի մեծ փառս քաղաքա-
կըրթութեան : Քաղաքակրթութիւնը, վերջապէս,
վայ կամ անապատ պիտի յալթանակէ բարբարոսու-
թեան՝ լայնարձակ ասպարէզ մը բանալով առհասա-
րակ բոլոր վաճառականներուն առջեւ : Գիտնալք օգ-
տուիլ առթէն :

Հրաւէր մը չէ այս, և արդէն հիմա առաջին
cataracte՝ Աստուանէն ասդին անցնելու արտօ-
նութիւն չկայ : Փափագելի է միայն, որ մեր հայ
վաճառականներն ալ անտարբեր չգտնուին Սուտա-
նի բայցման պատահականութենէն, օրինակ առնու-
նեք իսկոյն յորս կողմը յրուած յոյներէն և հետա-
բորբոր ըլլան իրենց շուրջը անցած դարձած՝ բա-
ներուն : Հետաքրքրութենէն է որ յաճախ նպատա-
կը կը ծնի, նպատակէն փափաքը և փափագէն՝ գոր-
ծունէութիւն մը, որմէ թէ՛ իրենք կօշտուին և թէ՛
մեր թշուառ գաղթական հայ եղբայրները :

Ս. Օ.

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Առաջնորդական Տեղապահ Տ. Յակոբ Մ. վարդապետ Աշոտ՝ ընկերակցութեամբ Ե. Գիւտոսի Երեսի. Ժողովոյ ատենադպիր Շէ. րիտեան Կարապետ պէյի՝ երկուշաբթի օրը այցելութեան գնաց նոյն Ժողովոյ Ատենապետ Տիգրան փաշայի և Ն. Վսեմութեան բերանացի կերպով տեղեկութիւններ հաղորդեց Առաջնորդարանի գործերուն ու նորակազմ հոգաբարձութիւններու պաշտօնավարութեան վրայ :

Տեղապահ Հայրը երեքշաբթի օրը այցելութեան գնաց Խալիկներու Կաթողիկոսին, հետոն ունենալով Տ. Մամբրէ քահանան և Առաջնորդարանի արաբերէնի քարտուղար Իսրահիմ էֆէնտին :

Խալիկներու Կաթողիկոսը սիրաբիր ընդունելութիւն ըրաւ :

Տ. Յակոբ վարդապետ մեկնելէ առաջ մայր եկեղեցի իջաւ ուր աղօթեց :

Բարձր. Խտիվին ծննդեան տարեգարձին առթիւ, Առաջնորդական Տեղապահ Հայրն այս առաւօտ շնորհաւորական հեռագիր մը ուղղեց Ն. Բարձրութեան յԱղեքսանդրիա :

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Մեր արտասահմանի բաժանորդներուն կը ծանուցանենք թէ մինչեւ յառաջիկայ Դեկտեմբեր 1 իրենց բաժանորդագիրն մեզ չի հասցունողներուն այլ ևս թերթ չի պիտի ղրկուի :

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Բարձր. Խտիվին ծննդեան տարեգարձին առթիւ, այսօր կառավարական բոլոր պաշտօնատուները գոց կը մնան :

Բասէլ-Թիւրի պալատին մէջ Խտիվը պիտի ընդունի քաղաքական և զինուորային բարձրաստիճան պաշտօնեաներու շնորհաւորութիւնները :

—Որքան որ Սիամի թագաւորին համար ըսուած էր թէ միայն ութ օր պիտի մնայ Եգիպտոս, բայց նորագոյն տեղեկութեանց նայելով՝ Շուլալօնիքօրն ամիսի մը չափ պիտի երկարէ իր այցելութիւնը :

Դէպ ի վերին Եգիպտոս՝ Նեղոսի վրայ պտույտ մը ընելու դիտաւորութիւնը յայտնած ըլլալով, Բարձր. Խտիվը երկու զբօսանաւ դրած է Նորին Վեհափառութեան տրամադրութեան ներքեւ :

Ի պատիւ արքայական այցելուն Օբէ. րայի թատրոնին մէջ Այճաի ներկայացում մը պիտի տրուի :

Շուլալօնիքօրն նոյեմբեր 7ին Ալեքսանդրիա պիտի հասնի, ուր զինքը դիմաւորելու պաշտօնը յանձնուած է բրէնս Մուհամմէտ Ալիի :

—Բարձր. Խտիվին մայրը որ ամառուան եղանակը Պոլիս անցուցած էր օգափոխութեան համար, երկուշաբթի իրիկուն վերագարձաւ Իէնվէիք Բապպաւնի շոգենաւով :

—Օրուան մեծ լուրը, կըսէ Բոսկրէ,

բրէնս Մուհամմէտ Ալի փաշայի մօտաւոր ամուսնութիւնն է Նիւ-Եօքքի հարուստ ընտանիքի մը պատկանող օրիորդի մը հետ : Իշխանը իր եղբոր՝ Բարձր. Խտիվին հաւանութիւնը խնդրելու եկած է, ի հարկին Եգիպտոսի գահուն վրայ ունեցած ժառանգական իրաւունքէն ալ հրաժարելու պայմանաւ : Այն պարագային ուր Բարձր. Խտիվը հաւանութիւն չիտայ, իշխանը որոշած է եղբր դարձեալ ամուսնանալ իր նշանածին հետ :

Ամերիկացի օրիորդը կը պատկանի՝ ընկերական լաւ դիրք ունեցող պատուաւոր ընտանիքի մը : Էմիլիքը Կազէթի տեղեկութիւններուն նայելով, իշխանը ու օրիորդը զիրար ճանչցեր են Պրիւսէի մէջ :

—Կէս-պաշտօնական զրոյցի մը նայելով՝ կըսէ Փառ. Տ'Ալեքսանտրի, բրէնս Սայիտ փաշան, որդի հանգուցեալ Հայիմ փաշայի, Սուլթանին հրամանով արգիլուել է Կ. Պոլսէ գուրս ելլել :

Սուլթանը կուզէ եղբր վար գնել բոլոր Եգիպտական հարուստ իշխանները, առարկելով թէ լաւագոյն է որ իրենց ստակը մայրաքաղաքին մէջ ծախսեն քան թէ այլուր :

—Ահմէտ Հասան Թէմէիք անուն 25 տարեկան Եգիպտացի երիտասարդ մը իսլամութիւնը ձգելով բողոքականութիւնն ընդգրկած է և երկուշաբթի իր կնոնքը կատարուեցաւ Աղեքսանդրիոյ անգլիական եկեղեցին մէջ :

Նորահաւատ երիտասարդը Եգիպտական երկաթուղիներու պաշտօնեայնեան է :

—Կրտսի թէ Պանը Օթօմանի Պոլսոյ տնօրէնութեան պիտի կոչուի Պ. Օրնըլթէյն, նախկին տնօրէն Թէմէիքիի ուէժիին :

—Աղեքսանդրիոյ ոստիկանութիւնը նախընթաց օր համառոտ անգլիական Բրիկն շոգենաւի ուղեւորներէն ալճէրիացի մը ձերբակալեց որուն վրայ կասկած կայ թէ քանի մը ամիս առաջ Էլզպէթի օթէյի մը մէջ խղճուած ալճէրիացիին սպանիչներէն մէկը եղած ըլլայ :

Կ Ի Կ Ն Ա Կ Ո Ճ Ի Ր

Ճէ.ք որովայնահատը և Բրանձինին յիշեցնող ուճիր մը գործուեցաւ անցեալ օր Գահիրէի Տարպ-Մուսթաֆա թաղին մէջ :

Նաղը անուն խառնակեաց կին մը իր սարսուռահին հետ մէկտեղ կը բնակէր տան մը մէջ՝ ուր իրենցմէ զատ ուրիշ վարձակաւներ չկային :

Քանի մը օրէ ի վեր տանը գուռը բացուած չըլլալով, դրացի կիներ կասկածեցան և անոնցմէ մին կըպանքին ծակէն ներս նայելու հետաքրքրութիւնը ունեցաւ. դրան ետեւէն եկած գաղափարութիւնը այլեւս կասկածի տեղի չէր ձգեր : Տարօրինակ բան մը պատահած ըլլալու էր այդ տան մէջ, հետեւաբար ոստիկանութեան իմաց տրուելով գուռը խորտակուեցաւ :

Ահաւրի տեսարան մը կը պարզուէր ներս մտնողներու աչքին : Նաղըի և սպասուհին մարմինները մօրթուած և որովայնահատ վիճակի մը մէջ գետինը փռուած էին :

Բժշկական քննութիւն մը հաստատեց թէ այդ կրկնակ ոճիրը երեք օր առաջ գործուած էր :

Տան կարասիները մէկիկ մէկիկ բացուած և խառնիվուռն վիճակի մը մէջ գտնուելէն կը հետեւի թէ ոճիրին շարժառիթը գողութիւնը եղած է :

Մինչեւ այսօր ոստիկանութիւնը ոճրագործին հետը գտած չէ :

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ա.Թ.Ե.Ն.Բ. 26 հոկտ.—Յունաստանի նաւային գործերուն վրայ կատարելի քննութեան յանձնաժողով

վը պիտի կազմուի Գանարիս ծովակալին նախագահութեամբ :

Սաստիկ ձմեռ մը կը սկսի ի Թեսալիս :

Շ Ո Գ Մ Ո Գ

Առածներուն կիրառութիւնը :

Time is money՝ Ժամանակը գրամ է. այս անգլիական առածին որքան ճշմարիտ ըլլալը գնդամուղ խաղացողները միայն գիտեն :

* * *

Այն կիները որ մայր ըլլալու վրայ են, իրենց վիճակը բացատրելու համար ուրիշ առած մը չեն կրնար գործածել բայց եթէ «Սափօր» այնքան անգամ աղբիւր կերթոյ որ վերջապէս... կը լեցուի :

* * *

Պրագէ մը հետեւեալ դիտողութիւնը ըրած է :

«Ունենալ աղւոր հագուող կիները՝ ամենէն շատ հանուղներն են» :

Ռ.

Բ Ա Ր Ե Գ Ո Ր Մ Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Ա Ձ Դ

Բարեգործական Ընկերութեան վարչութիւնը պատիւ ունի այսու ազդագրով հրաւիրել իւր բաժնետէրերը որ հաճին իրենց հին բաժնեմուհակները ներկայել ընկ. Սրճաբանի ներքին տնօրէն Այճեան Առաքել էֆէնտին և ստանան նոցա փոխան նոր բաժնետոմսերը :

Ա Ձ Դ

Պոլսոյ Ժանօթ ձեւագիրուհիներէն Օր. Էօթէի Փափազեան որ տարիէ մը հետէ Եգիպտոս հաստատուած է, ձեւագիրութեան դասեր կաւանդէ թէ՛ մասնաւորաց տուներ և թէ՛ վարժարաններու մէջ : Նոյնպէս կը ստանան կանացի հագուստներու պատրաստութիւն՝ շատ ճաշակաւոր կերպով ու դիւրամատ չելի պայմաններով : Գիմել Փարոսի խմբագրատունը 1—16

Տիկին Էօթէի Էրզուրումիւն օր այժմ Գահիրէ հաստատուած է, պատիւ ունի ծանուցանել թէ պատրաստ է դաւանակահարութեան դասեր տալ մասնաւոր տուներու և վարժարաններու մէջ :

Դիմել ֆարոսի խմբագրատունը կամ Տ. Գաբրիէլ Նեւանեանի : 4—6

ՄԻ ՄՆԱԲ ԵՐԻՔԻ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՑԻ

Քանի որ միմիայն 22 դրուէի անհատաւոր գնոյ մը փոխարէն, նիքէլ, կոթէն լարուղ, ընտիր ժամացոյցներ կը վաճառուին Սեյվանեան մթերաւոյցի մէջ, ի հաւ խալի փողոց (Ոսկերչաց շուկան) ճէվահիր վէքեալէի մէջ :

Սեյվանեան մթերաւոյցի մէջ կը գտնուին նաեւ ամեն ճաշակի և ամեն քրտիկ յարմար, ոսկի, արծաթ, ոսկեգատ և նիքէլ ժամացոյցք, շրթայք և գոհարեղէնը ինչպէս նաեւ պատի և քոնաղի բաղաւաղան բանտիւններ : 1—12

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ԿԻՆԸ ԻՐԻՔԻ ԱՍՈՒՍԻՆ

Բարիքի մէջ կիներու ազատագրութեան (emancipation) համար հիմնուած ընկերութիւններէ մէկուն անցեալ հինգշաբթի օրուան նիստը սովորականէն տարբեր կերպով աղմկայոյց եղաւ, հետեւեալ հարցին պատճառաւ :

«Կիներ» ամուսնական կեանքի համար ստեղծուած է :

Հարցումը դիւանին ուղղեց տիկին Բօթօնիէ-Բիէն որուն պատասխանեց անդամուհիներէն մին որ անունը տալ չէ ուզած, իրեն յատուկ պատճառներու համար :

Աւաստիկ այդ հարցման պատասխանը
— Տեղադր և տիրակալ, թուղթերու մէջ օրէն-
քի նախագիծ մը դրոյ դրոյ ի ձեռնոյ խորհրդարան-
նին պիտի ներկայացնեն, ներկայէր որ զայն նախա-
պէս ձեռք կարգամ:

Յօդ. Գ. — Ամուսնութիւնը շնորհած է:
Յօդ. Բ. — Ինչպէս որ գերութիւնը շնորհած է և
որովհետեւ ամուսնութիւնը գերութեան ամենէն
զէջ տեսակն է, հետեւաբար այսուհետեւ թէ՛ այ-
րերը և թէ՛ կիները ազատ են իրենց ուզած կեր-
պով տրամադրել մարմինն ու հոգին:

Յօդ. Գ. — Հաւատարմութեան որ և է դաշինք
ստորագրողը 15 օրէն մինչեւ մէկ տարի բանտար-
կութեան պիտի դատապարտուի:

Յօդ. Դ. — Ամեն անոնք որ ընտրութեան ճայնին
չանստարով հաւատարմութեան ուխտեր կը կատարեն,
2 տարին 5 տարուան բանտարկութեան պիտի դա-
տապարտուին:

Ինչպէս կը տեսնուի այս քառեակ յօդուածներու
խառնուի, կիները՝ իրենք գիրենք գրենք կը նկա-
տեն ամուսնութեան հանդէպ և ամուսնական լուծե-
րէ դուրս միայն կըմտնեն իրենց ազատագրութիւնը:

Հնդկաստանցի կին մը աւելի առաջ երթալով՝
— Մեր երկրին մէջ, կըսէ, գաւառները իրենց մօրը
անունը կը կրեն և ոչ թէ հօրը: Եւ կը պահանջէ
որ այսուհետեւ Եւրոպայի մէջ ալ ասանկ ըլլայ —
քանի որ — կը յաւելու — հայր ըստած արարածը
պարզապէս «երեւակայական» բան մըն է:

Տարակոյտ չկայ որ այս ըստածները ամուսնու-
թիւնները զիրարանցելու հանգամանքը չունին և ա-
միկայ շատ կը զարմացնէ զմեզ, քանզի ամուսնու-
թեան զատ չենք գիտեր թէ կիները ինչ բանի օգ-
տակար կրնան ըլլալ:

Չէ, կանանց ազատագրութիւնը ամուսնութեան
ընթացքով սկսելու չէր:



ՃԵՐՄԱԿԵԼԷՆ ԵՒՍՏԼՆ ԼՈՒՍԼՈՒ ՇԱՄԱՐ
Գ Ռ Ր Ծ Ա Ն Ե Յ Ե Ք

ԼԷՍՍԻՎՏԻ ԺԵՆԻՆ

Ծ. Ե. Ս. Ի. և ժամանակի խնայողութեան
բիւն. — Մաքուր քանակ և արագութեամբ
ձուլիւն. — Արագութեամբ և ցերեպիւն. — ձեռնակե-
ղեններու և այլոց հասկանալով:

ԿԱՐԵԻՌ. ԼԵՍՍԻՎՏԻ ԺԵՆԻՆ ԶԻ ՄԱՇԵՆՆԵՐ


Եւրոպայի և Ամերիկայի մէջ 400,000,000 ֆրո
սարեկան սպառում. — Գործածութեան կերպը խիստ
դիւրին՝ իւրաքանչիւր բաժնի վրայ կը գտնուի:

Միակ ներկայացուցիչ յեղիպոս

Կ. Վ. ԵԿԱՒԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Գահիրէ. ՊԱՋԱՐ ՄՈՒՐՈՒՐ 6—24

ԺԱՄԱՑՈՅՑԻ ՊԵՏԻՔ ՈՒՆԻՔ



Գիմեցէր ՍԵԼՎԱԶԵԱՆԻ
նորահաստատ միջերանոցն ի
համ խալիլ փողոց (Ոսկեր-
չաց շուկան) ձեւակերպութեամբ
իւր մէջ: Սեւիկեան վաճա-
ռատունն որ Պոլսոյ հրապա-
րակի վրայ մեծ համբաւ մը
կը վայելէր արդէն, իւր ապ-
րանաց ընտրութեամբ զը-
նոց անմրցելի ամուսնութեամբ, վերջերս յորդողին հոս
փոխադրուած ըլլալով Եգիպտոսի հասարակութիւնն
եւս պիտի կրնայ մեծապէս օգտիլ այս առիթին:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՐԹԵԻԿՈՒԹԵԱՆՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՑՈՒՆԴԻՐՈՅ ԳԻԾ

Կ Ա Ց Ա Ր Ա Ն Ք		Խառն		Սմիկալ		Կէս ուղ.		Սմիկալ		Էրարէս		Սմիկալ		Էրարէս		Սմիկալ	
		1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1, 2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1, 2 կգ.	առտ.	1 2 3 կարգ	առտ.
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 —	—	8 15	—	9 30	—	3 30	—	4 45	—	7 15	—	7 15	—
Պէնհա	»	8 —	—	7 49	—	9 32	—	10 15	—	4 47	—	5 29	—	8 32	—	8 32	—
Թանթա	»	11 28	—	8 30	—	10 30	—	10 55	—	5 45	—	6 7	—	9 30	—	9 30	—
	մեկ.	11 48	—	8 34	—	11 15	—	11 —	—	6 26	—	6 11	—	—	—	—	—
Տամանհուր	»	3 10	—	7 34	—	9 41	—	12 49	—	11 58	—	7 59	—	7 7	—	—	—
Աշէ քսանդրիա	»	6 25	—	9 15	—	10 45	—	2 30	—	1 —	—	9 40	—	8 7	—	—	—

ԱՂԵՑՈՒՆԴԻՐՈՅ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Ց Ա Ր Ա Ն Ք		Սմիկալ		Կէս ուղ.		Սմիկալ		Էրարէս		Խառն		Սմիկալ		Էրարէս		Սմիկալ	
		1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1 2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1 2 կգ.	առտ.	1 2 3 կարգ	առտ.
Աղէքսանդրիա	մեկ.	—	—	7 —	—	7 15	—	9 —	—	9 20	—	2 30	—	4 15	—	6 15	—
Տամանհուր	»	—	—	8 6	—	8 58	—	10 2	—	12 14	—	4 13	—	5 15	—	8 6	—
Թանթա	»	—	—	9 12	—	10 28	—	11 —	—	2 39	—	5 43	—	6 10	—	9 40	—
	մեկ.	6 15	—	9 16	—	11 20	—	11 5	—	2 49	—	6 30	—	6 14	—	—	—
Պէնհա	»	—	—	10 28	—	11 —	—	11 5	—	2 49	—	6 30	—	6 14	—	—	—
Գահիրէ	մեկ.	7 18	—	9 59	—	12 23	—	11 46	—	4 43	—	7 33	—	6 52	—	—	—
	մեկ.	8 30	—	10 45	—	1 35	—	12 30	—	6 25	—	8 45	—	7 35	—	—	—

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԳԱՀԻՐԷ			ՊԵՆՀԱՅԻ			ՍԻԻԷԶ		
ԿԱՑԱՐԱՆՔ	ԱՌԱՐՈՅ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՑԱՐԱՆՔ	ԱՌԱՐՈՅ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՑԱՐԱՆՔ	ԱՌԱՐՈՅ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50	—	—
Պէնհա	»	12 28	7 48	» կայարան	»	—	—	3 45
	մեկ.	12 33	7 53					
Զակաղիկ	»	1 34	8 54	Խամախիլ	»	1 20	—	7 5
	մեկ.	1 44	9 4					
Իսմաիլիա	»	3 40	1 —	Զակաղիկ	»	3 7	—	8 53
	մեկ.	—	—		մեկ.	3 17	—	9 3
Սիւէզ կայարան	»	—	5 —	Պէնհա	»	4 13	—	9 47
	մեկ.	—	—		մեկ.	4 17	—	9 4
Տը (բարափ)	»	6 55	—	Գահիրէ	»	5 5	—	10 35
	մեկ.	—	—		մեկ.	—	—	—

ՀԱՄԱՐԱՄ

ԵՐՈՒՊԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱՂՆԻՔ

ՀԱՄԱՓԱՇՏԱՅԻ ՇՐԱՐԱՐԱԿ. ՍԲԱՆՏԻՏ ՊԱՌԻ ԵՏԻՆ

ԲԱՂՆԻՔ, ՋՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ,
ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ

ԲԱՂՆԻՔԸ ԲԱՑ Է

Էրիկ մարդոց համար առաւօտեան ժամը 7էն 10
և իրիկունը, կէս օրէն սկսեալ մինչեւ 8:

Կանանց համար առաւօտեան ժամը 10էն մինչեւ
կէս օր:

Քարտ և կիրակի օրերը միմիայն Էրիկ մարդոց հա-
մար:

Կիրակի և տօն օրերը Համամար կէս օրէն վերջ
գոյ է:

ՏՊԱՐԱՆ “ՓԱՐՈՍ” ԼՐԱԳՐԻ

ԿԸ ՏՊԱԳՐՈՒԻՆ
ԱՄԵՆ ԼԵՁՈՒԻ ԵՐԶԱՐԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱՋԻ, ՀՐԱԻԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱՔԱՐՏ

ՅԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳՐՈՒԻՆ

ՏՈՄՍԵՐ

Եգիպտոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած
յանձնարարութիւնները ամենայն խնամօք և փութով
կը կատարուին:

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Այցաբարձրու և տնտեսու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ
օգոստոսի, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7:

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN
Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի